


# Կոսմետոլոգիական միջամտությունների իրավական կարգավորման առնչվող հիմնահարցեր

Խաչատրյան Աննա Կ.

Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,

Հայ-ռուսական համալսարան,

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մարաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0008-1315-3336>

[annakhatchatryan77@gmail.com](mailto:annakhatchatryan77@gmail.com)

ՀՏԳ՝ 342.7; EDN: FYJNDC

DOI: 10.58587/18292437-2025.1-39

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** կոսմետոլոգիական միջամտություններ, օժանդակիչային և կոսմետիկական արտադրանք, ինվազիվ, ներգործող և ազդող միջամտություններ, դաջվածք

## Вопросы правового регулирования косметологических вмешательств

Хачатрян Анна К.

Аспирант кафедры теории права и конституционного права Армяно-Российского университета, старший следователь следственного отдела административного района Малатия-Себастья следственного управления города Еревана Следственного комитета РА (Ереван, РА)

**Аннотация.** В статье обсуждается понятие парамедицинских услуг, необходимость включения в перечень парамедицинских услуг лечебных косметологических вмешательств и других телесно-косметологических вмешательств. Затрагивается вопрос лицензирования оборудования, используемого при проведении безоперационных косметологических вмешательств. Целью работы является выделение правовых вопросов, которые должен решать уполномоченный орган в сфере здравоохранения, принимая во внимание, что хотя основной целью косметологических вмешательств является коррекция и изменение внешних признаков, последние напрямую связаны со здоровьем человека.

**Ключевые слова и словосочетания:** косметологические вмешательства, парфюмерно-косметическая продукция, инвазивные, воздействующие и влияющие вмешательства, татуировка

## Issues Related to the Legal Regulation of Cosmetological Interventions

Khachatryan Anna K.

PhD student of the Department of Law Theory and Constitutional Law of the Armenian-Russian University, senior investigator of the Investigative section of the Malatia-Sebastia Administrative District of the Investigative Department of the Yerevan City of the Investigative Committee of the RA (Yerevan, RA)

**Abstract.** The paper discusses the concept of paramedical services, the need to include therapeutic cosmetology interventions and other cosmetology interventions related to the body in the list of paramedical services. The paper addresses the issue of licensing equipment used during non-surgical cosmetology interventions. The aim of the paper is to highlight the legal issues that should be addressed by the authorized health authority, taking into account that although the primary goal of cosmetology interventions is the correction and modification of external features, the latter are directly related to human health.

**Keywords & phrases:** cosmetological interventions, perfumery and cosmetic products, invasive, impacting and influencing interventions, tattoo

Ներկայումս կոսմետոլոգիական միջամտությունների կիրառումը լայնորեն տարածված է և շարունակում է ակտիվորեն զարգանալ: Վերը նշվածը վերաբերում է թե՛ բուժական, թե՛ վիրաբուժական, թե՛ մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններին: Մինչ վերջիններիս վերաբերյալ իրավական կարգավորումներին անդրադառնալն, անհրաժեշտ է, նախևառաջ, պարզաբանել, թե ինչպիսի միջամտություններ են ընդգրկվում կոսմետոլոգիայում:

**1/ Կոսմետոլոգիայի հասկացությունը, կոսմետոլոգիական միջամտությունների տեսակները, հոդվածի ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող կոսմետոլոգիական միջամտությունների տեսակները:**

Կոսմետոլոգիայի հասկացությունը ծագել է հունարեն «kosmeo» բառից, որը նշանակում է «զարդարում եմ»: Կոսմետոլոգիան ուսումնասիրում է մարդու մարմնի գեղագիտական խնդիրները, նրանց պատճառագիտությունը, ախտանշանները և շտկման մեթոդները, ինչպես

նաև այն մեթոդները, որոնք ուղղված են ուղղելու մարդու արտաքին տեսքի գեղագիտական խնդիրները: Կոսմետոլոգիական միջամտությունները, ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել 3 հիմնական խմբերի՝ 1/ բուժական կոսմետոլոգիական միջամտություններ, 2/ վիրաբուժական կոսմետոլոգիական միջամտություններ, 3/ մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններ: Վիրաբուժական կոսմետոլոգիական միջամտությունն այլ կերպ անվանվում է «Էսթետիկ կամ պլաստիկ վիրաբուժություն», որն ընդգրկում է այնպիսի միջամտություններ, ինչպիսիք են քթի վիրահատությունները (օրինակ՝ քթի միջնապատի պլաստիկա, քթի ռեկոնստրուկտիվ վիրահատություններ), դեմքի վիրահատությունները (օրինակ՝ դեմքի վերականգնողական վիրահատություններ, այտոսկրերի պլաստիկա, կզակի պլաստիկա, դեմքի բնածին ու ձեռքբերովի արատների վերացում), կուպերի վիրահատությունները (օրինակ՝ վերին կուպի կախվածության շտկում, ճակատի և հոնքերի ձգում), ականջի վիրահատությունները (սեփական պատճառով ականջի ռեկոնստրուկցիա, ականջի պլաստիկ վիրահատություն), կրծքի վիրահատությունները (օրինակ՝ անհամաչափության վերացում, իմպլանտների տեղադրում), մարմնի շտկման վիրահատությունները (մարմնի մասերի բնածին ու ձեռքբերովի արատների վերացում, մարմնի բոլոր մասերից ավելցուկային ճարպերի հեռացում, ուսերի պլաստիկա): Վերը նշված վիրաբուժական կոսմետոլոգիական միջամտությունների դեպքում բժշկի վիրաբուժական որակավորումը, իսկ բուժհաստատության՝ համապատասխան լիցենզավորումը պարտադիր է, ուստի վիրաբուժական կոսմետոլոգիական միջամտությունների հետևանքով մարդու առողջությանը պատճառված վնասը հնարավոր է քննարկել բժշկական սխալի համատեքստում և արարքին տալ համապատասխան իրավական գնահատական («Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն կառավարության որոշման [2] հավելվածով սահմանվում են հետևյալ լիցենզավորվող բժշկական օգնության և սպասարկման տեսակները՝ [11] 63/ պլաստիկ վերակառուցողական և էսթետիկ վիրաբուժական գործունեություն): Ինչ վերաբերում է բուժական կոսմետոլոգիական միջամտություններին և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններին, ապա վերջիններս Հայաստանի Հանրապետությունում իրավական առումով չեն վերահսկվում, այսինքն՝ բուժական և այլ կոսմետոլոգիական միջամտություն իրականացնող անձինք լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով մասնա-

գիտական որակավորում չեն ստանում, միամտությունների իրականացման ընթացքում օգտագործվող կոսմետիկ միջոցները որևէ կերպ չեն վերահսկվում (ի տարբերություն դեղերի, որոնք շրջանառության դուրս գալուց առաջ անցնում են կլինիկական մի շարք փորձարկումներ, այնուհետև ստանում պետական գրանցում), իսկ այդ միջամտություններն իրականացնելուց առաջ անձը պարտադիր հետազոտությունների չի ենթարկվում (պարզելու համար, օրինակ, պերգիկ ռեակցիաների առկայությունը, մաշկային խնդիրների առկայությունը և այլն): Բուժական կոսմետոլոգիական միջամտություններից են էսթետիկ ներարկումները (օրինակ՝ մեզոթերապիա<sup>1</sup>, բոտուլինաթերապիա<sup>2</sup> բոտոքս), լազերային թերապիան, ֆոտոթերապիան, մազնիսական թերապիան, մաքրող, սնուցող, մաշկը խոնավեցնող արտաքին կոսմետիկ միջոցների օգտագործումը և այլն: Մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունները բազմաթիվ են և տարաբնույթ, սակայն դրանցից սույն աշխատանքում նպատակահարմար է քննարկել՝ 1/ դաջվածքը, 2/ փիրսինգը, 3/ ապարատային եղանակով մազահեռացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն աշխատանքում քննարկվելու են միայն բուժական կոսմետոլոգիական միջամտությունների և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունների իրավական կարգավորումներին առնչվող հիմնահարցերը:

## **2/ Բուժական կոսմետոլոգիական միջամտությունները և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունները բժշկական օգնության և սպասարկման համատեքստում:**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի [1] 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «բժշկական օգնություն և սպասարկում է համարվում բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, պալիատիվ, դեղորայքային օգնության ցուցաբերումը, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացումը, հարբժշկական և ոչ բուժական բնույթի

<sup>1</sup> Մեզոթերապիան ներարկումային միջամտություն է, որի ընթացքում միկրոդեղաչափերով մաշկի համապատասխան շերտ են ներմուծվում միատարր կամ բազմատարր նյութեր, որոնք կարող ենք ներառել վիտամիններ, միկրոէլեմենտներ, հիպոլորոնաթթու, ամինաթթուներ, պեպտիդներ, լիպոլիտիկներ և այլ ակտիվ բաղադրիչներ: Տե՛ս [12]:

<sup>2</sup> Բոտուլինոթերապիայի միջամտության հիմքում ընկած է մկանի թիրախային կետերում բոտուլոտոքսինի ներարկումը, որը կասեցնում է նյարդային ազդակը մկանին՝ այդպիսով թուլացնելով միմիկան, որն իր հերթին հարթում է միմիկական կնճիռների ի հայտ գալը միմիկայի կիրառման ժամանակ: Տե՛ս [13]:

ծառայությունների մատուցումը»: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի [1] ուսումնասիրությունից երևում է, որ բուժական կոսմետոլոգիական միջամտությունները և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունները բժշկական օգնության և սպասարկման որևէ տեսակի մեջ չեն դասակարգվում, չնայած, որ անմիջականորեն կապված են մարդու առողջության հետ: Հատկանշական է, որ վերջիններս ընդգրկված չեն նույնիսկ հարբժշկական ծառայությունների ցանկում: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը չի սահմանում «հարբժշկական ծառայության» հասկացությունը, չի սահմանում, թե ինչ չափանիշների դեպքում պետք է գործունեությունը համարվի հարբժշկական ծառայություն, այլ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով միայն նշում է, որ հարբժշկական ծառայությունները բժշկական օգնությանն ու սպասարկմանն օժանդակող ծառայություններ են, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը: Հատկանշական է, որ «հարբժշկական ծառայություն» տերմինն օրենքի ընդունման օրվանից՝ 1996 թվականի մարտի 04-ից եղել է, սակայն միայն 2021 թվականի մայիսի 06-ին է ընդունվել այդ ծառայությունների ցանկը սահմանող ենթաօրենսդրական ակտը: 2021 թվականի մայիսի 06-ին ընդունված՝ առողջապահության նախարարի 29-Ն հրամանի համաձայն՝ հարբժշկական ծառայությունների ցանկը հաստատվել է՝ ըստ հավելվածի: Դրանք են՝ 1/ հոգեբանական, 2/ կինեզիոլոգիական, 3/ էրգոթերապևտիկ, 4/ օրթոգիստական, 5/ պրոթեզիստական, 6/ սոցիալական աշխատողի, 7/ հատուկ մանկավարժական (լոգոպեդ, սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, արտ-թերապիստ, խաղաթերապիստ), 8/ տեղեկատվական-խորհրդատվական (դիաբետի դպրոց, կրծքով սնուցման դպրոց, մայրության դպրոց), 9/ բժշկական սարքավորումների մասնագիտական տեխնիկական սպասարկման, 10/ բուժական ֆիզկուլտուրայի, 11/ դիակի խնամքի, մշակման (դաբադման) և պահպանման ծառայությունները: Թվարկված ծառայություններն իրենց բնույթով ամբողջությամբ բժշկական չեն, սակայն անմիջականորեն առնչվում են մարդու առողջությանը: «Հարբժշկական» հասկացության լեզվաբանական վերլուծությունից էլ երևում է, որ այն կազմված լինելով «հար» արմատից /ըստ Հրաչյա Աճառյանի Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ «հար» նշանակում է «կից, նման» [10, էջ 317], «հարել» բառի արմատը/, ցուցում է այն մասին, որ հասկացությունն ընդգրկում է մարդու

առողջությանն առնչվող և առողջապահական ոլորտում հստակ կարգավորումներ ունեցող գործունեությունների տեսակներին: Բուժական կոսմետոլոգիական և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունները և սանմիջականորեն կապված են մարդու առողջության հետ՝ չնայած, որ դրանց առաջնային նպատակը առողջության բարելավումը չէ, այլ կրում են գեղագիտական բնույթ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ բուժական կոսմետոլոգիական և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունները և սպետք է ընդգրկվեն 2021 թվականի մայիսի 06-ին ընդունված՝ առողջապահության նախարարի 29-Ն հրամանով [3] սահմանվող հարբժշկական ծառայությունների ցանկում և վերահսկվեն լիազոր մարմնի կողմից:

**3/ Բուժական կոսմետոլոգիական միջամտությունների և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունների հետևանքով անձի առողջությանը պատճառված վնասը և վրա հասնող պատասխանատվությունը:**

Բուժական կոսմետոլոգիական միջամտությունների և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունների հետևանքով անզգուշությամբ առողջությանը պատճառված վնասի համար վրա հասնող պատասխանատվությունը սույն աշխատանքում կրնանարկվի քրեական իրավունքի և քաղաքացիական իրավունքի տեսանկյունից:

Անդրադառնալով քրեական իրավունքին, պետք է ընդգծել, որ ինչպես 05.05.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը (գործող ԶՕ) [7], այնպես էլ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը (նախկին ԶՕ) [8] կոսմետոլոգիական միջամտությունների հետևանքով անզգուշությամբ առողջությանը վնաս պատճառելու հատուկ հանցակազմ չեն սահմանում, սակայն պատասխանատվությունը կարող է վրա հասնել ընդհանուր հանցակազմերով (անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, ընդհուպ՝ անզգուշությամբ մահ պատճառելը): Հաշվի առնելով, որ վերոնշյալ ծառայությունները չեն դասվում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի [1] 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվող ծառայությունների շարքին, ուստի նշված օրենքի իմաստով նման ծառայություններ մատուցող անձինք չեն հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսվող հանցակազմի (բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) սուբյեկտներ:

Օրինակ՝ կոսմետոլոգի կողմից կատարվում է կոսմետիկ անհայտ նյութի ներարկումներ, որոնցից առաջացած բարդությունների հետևանքով անձի դեմքն այտուցվում է՝ ընդհուպ խեղաթյուրելով վերջինս: Եթե նախաձեռնվի քրեական վարույթ, ապա դատաբժշկական փորձաքննությամբ անհրաժեշտ է պարզել անձի առողջությանը պատճառված վնասը, դրա աստիճանը, պատճառահետևանքային կապը տվյալ նյութերով կատարված ներարկումների հետ, վնասվածքի անջնջելի լինելու կամ այդպիսին չհանդիսանալու հանգամանքը<sup>1</sup>, իսկ վնասվածքների ապաքինումից հետո անհրաժեշտ է դատազեղագիտական փորձաքննության իրականացմամբ պարզել՝ արդոք վնասվածքից ստացած վերքի կամ վերքերի ապաքինումից հետո մնացած սպին կամ սպիերն առաջացրել են տուժողի մոտ դեմքի անջնջելի այլանդակում, թե՛ ոչ: Եթե փորձագետների եզրակացություններով հիմնավորվի, որ կոսմետիկ անհայտ նյութի ներարկումներից տուժողի մոտ առաջացել է դեմքի անջնջելի այլանդակում, ապա ներարկումները կատարած անձը քրեական պատասխանատվության կենթարկվի անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածով սահմանվող հանցակազմով, ինչը ընդհանուր հանցակազմ է և հատուկ սուբյեկտ չի նախատեսում:

Մեկ այլ օրինակ. կոսմետոլոգը բոտուլինաթերապիայի ներարկումներ է կատարում անձի դեմքի շրջանում և անզգուշությամբ վնասում է վերջինիս դեմքի եովորյակ նյարդը<sup>2</sup>, ինչի հետևանքով կարող է առաջանալ ընդհուպ ծամիչ մկանների կաթված, դեմքի ծովածություն և այլ ծանր հետևանքներ: Կամ աչքին կորություն տալու համար կիրառվում է բոտուլինաթերապիա, ինչի հետևանքով անձի տեսողությունը վատանում է: Մատնահարդարում/ոտնահարդարում կատարելիս կիրառվող գործիքների ոչ

<sup>1</sup> Վնասվածքի ջնջելիությունը ժամանակի ընթացքում կամ ոչ պլաստիկ վիրաբուժական միջոցներով վնասվածքների տեսանելի հետևանքների անհետացման հատկությունը կամ դրանց արտահայտվածության նկատելի նվազումն է (սպինների ձևափոխությունների արտահայտվածություն, դիմաշարժումային խանգարումների արտահայտվածություն և այլն): Վնասվածքն անջնջելի է, եթե այդ հետևանքների վերացման համար պահանջվում է պլաստիկ վիրահատություն:

<sup>2</sup> Եովորյակ նյարդը դուրս գալով նյարդային հանգույցից, բաժանվում է երեք հիմնական ճյուղերի՝ վերին կամ ակնային (լատ. nervus ophthalmicus) ճյուղը, միջին կամ վերձնոտային (լատ. nervus maxillaris) ճյուղը, ստորին կամ ստորձնոտային (լատ. nervus mandibularis) ճյուղը: Այս երեք նյարդաճյուղերը ապահովում են գլխի և դեմքի մեծ մասերի զգայունությունը, քթի և բերանի խոռոչի լորձաթաղանթի զգայունությունը, ստամոքսի, ինչպես նաև ուղեղի կարծր թաղանթի որոշակի հատվածը: Նյարդի շարժական նյարդաթելերը ապահովվում են ծամողական և այլ մկաններ:

ստերիլ լինելու պատճառով առաջանում է էկզզոն վարակ (վարակ, որը զարգացել է արտաքինից մանրէներով վարակման արդյունքում)՝ ախտահարելով ձեռքերը/ոտքերը:

Ինչ վերաբերում է քաղաքացիական իրավունքում քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասին, ապա դրա հատուցման ինստիտուտը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1077-1087-րդ հոդվածներով: Օրենսգրքը քննարկում է կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ կատարելու համատեքստում: Քաղաքացիական իրավունքում ևս, ինչպես քրեական իրավունքում, բուժական կոսմետոլոգիական միջամտությունների և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտությունների հետևանքով անզգուշությամբ առողջությանը պատճառված վնասի համար վրա հասնող պատասխանատվության սուբյեկտը ընդհանուր է և մասնավորեցնող նորմեր չեն սահմանվում:

#### **4/ Բուժական կոսմետոլոգիական միջամտություններում և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններում կիրառվող միջոցները:**

Բուժական կոսմետոլոգիական միջամտություններում և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններում կիրառվող միջոցների վերաբերյալ թե նախկինում, թե ներկայումս սահմանվում են իրավական կարգավորումներ, սակայն խնդիրն այն է, որ այդ միջոցների կիրառման փուլում լիազոր մարմինը լիարժեք իրավական մեխանիզմներ չունի, որպեսզի վերահսկողություն իրականացնի կոսմետոլոգիական միջամտությունն իրականացնող անձի նկատմամբ:

Անդրադառնալով կիրառվող միջոցներին ներկայացվող պահանջներին՝ նշենք, որ 24/11/2005 թվականին ՀՀ առողջապահության նախարարի կողմից ընդունվել է հրաման [4], որով սահմանվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության թունաբանական ցուցանիշները, մանրէաբանական ցուցանիշները, կլինիկո-լաբորատոր ցուցանիշները, մաշկի ֆունկցիոնալ վիճակի ցուցանիշները, անվտանգության իմունոսցիտոքիմիական ցուցանիշները, օժանելիքակոսմետիկական արտադրանքի զգայարանական և ֆիզիկոքիմիական ցուցանիշները: Սահմանվում է նաև օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ չթույլատրվող նյութերի ցանկը, որում առկա է թվով 412 անուն-նյութեր:

03/07/2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարի կողմից ընդունվել է հրաման [5], որով անդրադարձ է կատարվում օժանելիքային և կոսմետիկական արտադրան-

քին ու բերանի խոռոչի հիգիենայի միջոցների հումքին, զգայորոշման ցուցանիշներին, ֆիզիկաքիմիական ցուցանիշներին, թունավոր տարրերի պարունակությանը, մանրէաբանական ցուցանիշներին, թունաբանական անվտանգությանը, կլինիկական-լաբորատոր ցուցանիշներին, սպառողական փաթեթվածքին և մակնշմանը, պահպանման և փոխադրման պայմաններին: Հրամանի հավելվածի 9-րդ աղյուսակով սահմանվում է օծանելիքակոսմետիկական արտադրանքի և բերանի խոռոչի հիգիենայի միջոցների բաղադրության մեջ արգելված նյութերի ցանկը, որը կազմված է 1371 անուն-նյութերից:

24/05/2022 թվականի հրամանն [5] ուժը կորցրած է ճանաչվել և ՀՀ-ում սկսել է գործել «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական թիվ 009/2011 կանոնակարգը [6]:

Եթե անձի առողջությանը վնաս է պատճառվում կիրառելով այնպիսի միջոցներ, որոնք կանոնակարգի պահանջներին չեն համապատասխանում, ապա այստեղ, հիմք ընդունելով հետևանքի ծանրության աստիճանը, կարող ենք քննարկել արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածով որակելու հարցը: Սույն հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը կամ այդպիսի աշխատանք կատարելը կամ ծառայություն մատուցելը, եթե այդ արարքն անզուրույթամբ մարդու առողջությանը միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով»: Որպես ծանրացնող հանգամանքով կատարված է դիտարկվում նույն արարքը, որը 1) կատարվել է փոքրահասակների համար նախատեսված հումքի, ապրանքի, աշխատանքի կամ ծառայության կապակցությամբ կամ 2) անզուրույթամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք, և պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

5/ Ինչպես արդեն նշվեց, սույն աշխատանքում մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններից նպատակահարմար է քննարկել՝ 1/ դաջվածքը, 2/ փիրսինգը, 3/ ապարատային եղանակով մազահեռացումը՝

հաշվի առնելով դրանց՝ միմյանցից տարբերվող առանձնահատկությունները, որոնց վերլուծությունն ու քննարկումը հնարավորություն կտա նույնական կամ նմանատիպ հատկանիշներ ունեցող միջամտությունները ևս կանոնակարգել:

Դաջվածքի առանձնահատկությունն այն է, որ այն մարմնի փոփոխությունն է, որի ընթացքում թանաքը, ներկերը և պիգմենտները ներմուծվում են մաշկի դերմիս շերտի մեջ:

Փիրսինգը մարմնի փոփոխությունն է, որի ընթացքում մարմնի հատուկ մասերում (մարմնի արտաքին հատվածներին, ենթամաշկային) զարդեր և օղեր են կրում, ինչն իրենից ենթադրում է օտար առարկայի ամրացում, այդ թվում՝ ինվազիվ եղանակով:

Ապարատային եղանակով մազահեռացման դեպքում տեղի է ունենում ապարատային լուսարձակում և ճառագայթում, որոնք ազդում են մաշկի և մազարմատի վրա:

Նշված երեք օրինակները վերաբերում են կոսմետիկական միջամտությունների 3 տեսակների՝ 1/ ինվազիվ միջամտություններ, 2/ անմիջականորեն ներգործող միջամտություններ, 3/ ալիքների միջոցով ներգործող/ազդող միջամտություններ: Նշված երեք միջամտություններն էլ իրավական առումով կարգավորված չեն և չեն վերահսկվում, այնինչ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում նախնական բժշկական հետազոտություններ իրականացնել՝ պարզելու համար, թե ինչ հակացուցումներ ունի միջամտությունը կրող անձը, ինչ ծավալով պետք է իրականացվի միջամտությունը: Անհրաժեշտ է նշել նաև, որ լիազոր մարմնի կողմից վերահսկողություն չի իրականացվում նաև այն սարքավորումների նկատմամբ, որոնք կիրառվում են այս միջամտություններում:

Քննարկելով դաջվածքի և փիրսինգի միջամտությունները՝ անդրադարձ կատարենք Ֆրանսիական օրենսդրությանը, որտեղ մանրամասնությամբ կարգավորվում են այս միջամտությունները:

Ֆրանսիայի Հանրային առողջության մասին օրենսգրքի R1311-1 մինչև R1311-5 հոդվածները վերաբերում են միայն դաջվածքին և փիրսինգին [9, Articles R1311-1 à R1311-13]: Օրենսգիրքը նշում է, որ անձինք, ովքեր իրականացնում են R. 1311-1 հոդվածում նշված միջամտությունները՝ դաջվածք և մարմնի փիրսինգ, գործունեությունը սկսելու մասին հայտնում են տարածաշրջանային առողջապահական գործակալությանը. տվյալ գործունեության դադարեցումը նույնպես հայտնվում է նույն մարմնին: Այս հայտարարագրերի ներկայացման ժամկետները սահմանվում են առողջապահության նախարարի հրամանով: Օրենսգիրքը իմպլերատիվ նորմով սահմանում է, որ անձինք, ովքեր իրականացնում են R. 1311-1

հողվածում նշված միջամտությունները, պետք է վերապատրաստվեն հիգիենայի և առողջապահական պայմանների վերաբերյալ դասընթացների շրջանակներում, որոնց ավարտին տրվող դիպլոմի ձևը սահմանվում է առողջապահության նախարարի հրամանով: Կարևորություն է տրվում այն հանգամանքին, որ մարդու մաշկ թափանցող կամ մաշկի կամ լորձաթաղանթի հետ շփվող նյութը և միջոցները պետք է լինեն մեկանգամյա օգտագործման կամ ստերիլիզացված յուրաքանչյուր օգտագործումից առաջ: Այս միջամտություններից առաջացած թափոնները համարվում են վարակիչ ռիսկեր ունեցող առողջապահական գործունեության թափոններ և ենթակա են ոչնչացման համապատասխան կարգով:

Իրավական կարգավորումները վերաբերում են մինչև իսկ փիրսինգի ընթացքում կիրառվող զարդերին: Ըստ օրենքի՝ շուկայում առկա զարդի յուրաքանչյուր միավորի (զարդ և հենակ) հերմետիկ փաթեթավորումը ներառում է հետևյալ ցուցումները՝ պետք է գրվի այնպես, որպեսզի լինի հեշտ ընթեռնելի, հստակ հասկանալի և անջնջելի՝ 1/ ապրանքի անվանումը, 2/ պահպանման առավելագույն ժամկետը, որի ընթացքում ապրանքը պահվում է համապատասխան պայմաններում, շարունակում է կատարել իր սկզբնական գործառնությունը, 3/ արտադրական խմբաքանակի համարը կամ տեղեկանքը, որը թույլ է տալիս նույնականացնել արտադրությունը, 4/ «ստերիլ» բառի առկայություն, 5/ արտադրողի կամ այն շուկա հանելու համար պատասխանատու անձի / ընկերության անվանումը և հասցեն. այս նշումները կարող են կրճատվել, եթե հապավումը թույլ է տալիս նույնականացնել ընկերությանը:

Բացի այդ՝ արգելվում է դաջվածք և փիրսինգ կիրառել անչափահասի նկատմամբ՝ առանց ծնողի կամ նրա խնամակալի գրավոր համաձայնության: Անչափահասի նկատմամբ նման միջամտություններ իրականացնող անձինք պետք է երեք տարի շարունակ ներկայացնեն այս համաձայնության ապացույցը առողջապահության վերահսկող մարմիններին:

Փիրսինգի և դաջվածքի միջամտություններ իրականացնող անձինք իրենց հաճախորդներին տեղեկացնում են այն ռիսկերի մասին, որոնց նրանք ենթարկվում են, և այդ միջամտություններն իրականացնելուց հետո՝ նախազգուշական միջոցների մասին, որոնց պետք է հաճախորդները հետևեն: Այս տեղեկատվությունը տեսանելիորեն ցուցադրվում է այն տարածքներում, որտեղ կիրառվում են այս միջամտությունները և պարզաբանումները տրվում է հաճախորդներին գրավոր տարբերակով: Այս տեղեկատվության

բովանդակությունը սահմանվում է առողջապահության նախարարի հրամանով:

R1311-13 հողվածը սահմանում է, որ այս բաժնի դրույթները կիրառելի չեն բուժաշխատողների նկատմամբ, երբ նրանք իրականացնում են առողջապահական գործունեություն: Այս գործունեության համար նրանք շարունակում են ղեկավարվել իրենց վերաբերելի օրենսդրական և կարգավորող դրույթներով (օրինակ՝ բժշկական նպատակով դաջվածք կատարելու դեպքում):

#### **5/ Եզրահանգումներ:**

Այսպիսով, վերոգրյալից ելնելով՝ կարող ենք փաստել, որ բուժական կոսմետոլոգիական միջամտությունները և մարմնի հետ կապված այլ կոսմետոլոգիական միջամտություններն անհրաժեշտ է ընդգրկել 2021 թվականի մայիսի 06-ին ընդունված՝ առողջապահության նախարարի 29-Ն հրամանում [3]՝ որպես հարբժշկական ծառայություններ, այնուհետև վերահսկողություն սահմանել դրանք իրականացնող սուբյեկտների, կիրառվող միջոցների և մեթոդների նկատմամբ: Անհրաժեշտ է նաև սահմանել համապատասխան իրավական ընթացակարգ, որի շրջանակներում առողջապահության լիազոր մարմնի կողմից համապատասխան փորձաքննությունների հիման վրա, կարտոնագրվեն այն սարքավորումները, որոնք կիրառվում են կոսմետոլոգիական միջամտություններում: Իսկ այն կոսմետոլոգիական միջամտությունների դեպքում, որոնք ենթադրում են ինվազիվ, ներգործող կամ ազդող մեթոդների կիրառում, անհրաժեշտ է նախնական հետազոտություններ իրականացնել մարդու առողջական վիճակի վերաբերյալ, այնուհետև ըստ դրա պլանավորել միջամտությունների ընթացքը: Առողջական վիճակի վերաբերյալ նախապես ձեռքբերվող նվազագույն տվյալների բնույթն ու ծավալը պետք է սահմանվի առողջապահության լիազոր մարմնի կողմից:

#### **Օգտագործված գրականության ցանկ**

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք:
2. «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն կառավարության որոշում:
3. «Հարբժշկական ծառայությունների ցանկը հաստատելու մասին» 2021 թվականի մայիսի 06-ին ընդունված՝ առողջապահության նախարարի 29-Ն հրաման: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152474> (վերջին այցելությունը կայք՝ 06.01.2025 թվականին):

4. «Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» n 2-iii-8.2 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին առողջապահության նախարարի N 1109-Ն հրաման:
5. «Օձանելիքային և կոսմետիկական արտադրանքին ու բերանի խոռոչի հիգիենայի միջոցներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.012-14 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին առողջապահության նախարարի N 45-Ն հրաման:
6. «Օձանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական թիվ 009/2011 կանոնակարգ:
7. 05.05.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք:
8. 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք:
9. Ֆրանսիայի Հանրային առողջության մասին օրենսգիրք՝ Code de la santé publique, Chapitre Ier: Tatouage par effraction cutanée et perçage. [https://www.legifrance.gouv.fr/codes/section\\_lc/LE\\_GITEXT000006072665/LEGISCTA000018150106/](https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LE_GITEXT000006072665/LEGISCTA000018150106/)
- (վերջին այցելությունը կայք՝ 06.01.2025 թվականին):
10. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն: - Երևան, 1974, հատոր 3:
11. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=154258> (վերջին այցելությունը կայք՝ 06.01.2025 թվականին)
12. Էսթետիկ բժշկության և մաշկաբանության կենտրոն Cosmolab Էլ. կայք // Մեզոթերապիա <https://cosmolab.am/cherry-services/mezoterapia/> (վերջին այցելությունը կայք՝ 06.01.2025 թվականին)
13. Էսթետիկ բժշկության և մաշկաբանության կենտրոն Cosmolab Էլ. կայք // Բոտուլինոթերապիա <https://cosmolab.am/cherry-services/botulinoterapia/> (վերջին այցելությունը կայք՝ 06.01.2025 թվականին)

*Сдана/Հանձնվել է՝ 08.02.2025*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 14.02.2025*

*Принята/Ընդունվել է՝ 20.02.2025*